ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ԱԼԱՇԿԵՐՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ГУБЕРНИЯ
СЕЛО. АЛАШКЕРТ

VILLAGE ALASHKERT MARZ OF ARMAVIR REPUBLIK OF ARMENIA

Արմավիրի մարզպետ՝
Պարոն Ա. Ղահրամանյանին

12 99/12 2011թ.

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Ալաշկերտ համայնքի ավագանու 02.12.2011թ. կայացած թիվ 9 նիստի որոշումները, ինչպես նաև տեղեկացվում է, որ 2011 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները և համայնքի վարչական տարածքում 2012 թ-ի համար տեղական տուրքերը և դրույքաչափերը սահմանված կարգով ուղղարկվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:

Առդիր 10 էջ:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎ... Մուտք 11883-11 «12» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ալաշկերտ համայնք,

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2011 թվականի N 19

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Հաստատել ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 2-ին թիվ 9 նիստի օրակարգը համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (4) | Դեմ ( ) | Ձեռնպահ ( )

Վարդևար Մովսիսյան
Անդրանիկ Հովհաննիսյան
Մխիթար Տոնոյան
Կարապետ Մանուկյան

<< Համայնքի ղեկավար>> Կարեն Հովհաննիսյան

02.12.2011թ.
Գ. Ալաշկերտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ալաշկերտ
գյուղական համայնքի ավագանու
թիվ 9 նիստի թիվ 19 որոշման վերաբերյալ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Թիվ 9 նիստ 02.12. 2011թ.

| | | |
|---|---|---|
| 1. | Օրակարգի հաստատումը. | Համայնքի ղեկ.՝ Կ. Հովհաննիսյան |
| 2. | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի 2011թ-ի դեկտեմբերի 1-ի թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: | Համայնքի ղեկ.՝ Կ. Հովհաննիսյան |
| 3. | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին: | Համայնքի ղեկ.՝ Կ. Հովհաննիսյան |
| 4. | Ալաշկերտ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին: | Համայնքի ղեկ.՝ Կ. Հովհաննիսյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ալաշկերտ համայնք,

# ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2011 թվականի N21 Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով. <Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Կողմ (4) Դեմ ( ) Ձեռնպահ ( )

Վարդնար Մովսիսյան
Անդրանիկ Հովհաննիսյան
Մխիթար Տոնոյան
Կարապետ Մանուկյան

<< Համայնքի ղեկավար>> Կարեն Հովհաննիսյան

02.12.2011թ.

Գ. Ալաշկերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ալաշկերտ համայնք,

# ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2011 թվականի N20 Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունները.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 1-ի <<Բյուջեն հաստատելու մասին>> ԹԻՎ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Կողմ (4) Դեմ ( ) Ձեռնպահ ( )

Վարդևար Մովսիսյան
Անդրանիկ Հովհաննիսյան
Մխիթար Տոնոյան
Կարապետ Մանուկյան

<< Համայնքի ղեկավար>> Կարեն Հովհաննիսյան

02.12.2011թ.

Գ. Ալաշկերտ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ալաշկերտ
Գյուղական համայնքի ավագանու
թիվ 9 նիստի N 20-Ն որոշման

1. Կատարել ծախսային մասի փոփոխություն

01-1-1 բաժին խումբ դասի 4111 հոդվածը պակասեցնել 113.4 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4131 հոդվածը ավելացնել 113.4 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4111 հոդվածը պակասեցնել 70.0 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4212 հոդվածը պակասեցնել 173.0 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4234 հոդվածը պակասեցնել 84.0 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4267 հոդվածը պակասեցնել 335.0 հազար դրամ
01-1-1 բաժին խումբ դասի 4264 հոդվածը ավելացնել 419.0 հազար դրամ

01-3-3 բաժին խումբ դասի 4232 հոդվածը պակասեցնել 6.2 հազար դրամ

01-6-1 բաժի խումբ դասի 4269 հոդվածը պակասեցնել 132.8 հազար դրամ

04-5-1 բաժին խումբ դասի 4251 հոդվածը պակասեցնել 8.0 հազար դրամ

08-2-1 բաժին խումբ դասի 4131 հոդվածը պակասեցնել 3.3 հազար դրամ
08-2-1 բաժին խումբ դասի 4111 հոդվածը ավելացնել 3.3 հազար դրամ

09-1-1 բաժին խումբ դասի 4511 հոդվածը պակասեցնել 4.0 հազար դրամ

09-5-1 բաժին խումբ դասի 4637 հոդվածը պակասեցնել 280.0 հազար դրամ
09-5-1 բաժին խումբ դասի 4511 հոդվածը ավելացնել 280.0 հազար դրամ

10-7-1 բաժին խումբ դասի 4729 հոդվածը ավելացնել 394.0 հազար դրամ

2. Պահուստային ֆոնդից պակասեցնել 129.0 հազար դրամ, ավելացնել վարչական բյուջեի 01-1-1 բաժին խումբ դասի 4261 հոդվածին 129.0 հազար դրամ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N 21 Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական ( ամառանոցային ) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար դրամ
2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ութ հազար դրամ
գ.. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է`

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` հինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` վեց հազար դրամ

5. Համայնքի տարածքում`

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար` երեք հարյուր հիսուն դրամ

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ.

7. Համայնքի տարածքում` առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար` տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է`

1) առևտրի օբյեկտների համար` քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար` երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար` հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար` երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար` մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է` մեկ հարյուր հազար դրամ

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ` մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար` հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար` յոթ հարյուր դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ.

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է` մեկ հազար դրամ.

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ.

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ալաշկերտ համայնք,

## ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2011 թվականի N22

## ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով Ալաշկերտ համայնքի ղեկավարի առաջարկությունները.

1. Հաստատել Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարի աշխատակազմի 2012 թվականի հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (4) Դեմ ( ) Ձեռնպահ ( )

Վարդնար Մովսիսյան
Անդրանիկ Հովհաննիսյան
Մխիթար Տոնոյան
Կարապետ Մանուկյան

<< Համայնքի ղեկավար>> Կարեն Հովհաննիսյան

02.12.2011թ.

Գ. Ալաշկերտ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ալաշկերտ
գյուղական համայնքի ավագանու
թիվ 9 նիստի թիվ 22 որոշման վերաբերյալ

2012 թվականի համար Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարի աշխատակազմի հասիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը.

| հ/հ | Պաշտոնները | Աշխատավարձի չափը 2012 | Աշխատավարձի չափը 2011 |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 150.000 | 150.000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 100.000 | 100.000 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար /1.2.1/ | 98.000 | 98.000 |
| 4 | Գլխավոր մասնագետ /2.3.1/ | 95.000 | 85.000 |
| 5 | Առաջատար մասնագետ /3.1.1/ | 52.000 | 52.000 |
| 6 | Առաջատար մասնագետ /3.1.2/ | 52.000 | 52.000 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ /3.2.1/ | 50.000 | 50.000 |
| 8 | Համայնքի ղեկավարի օգնական | -- | -- |
| 9 | Համայնքի ղեկավարի օգնական | 40.000 | 40.000 |
| 10 | Գործավար | 35.000 | 35.000 |
| 11 | Մանկապարտեզի պահակ | 35.000 | 35.000 |
| 12 | Տեխ. աշխատող /հավաքարար/ | 35.000 | 35.000 |
| 13 | Գրադարանի վարիչ | 40.000 | 40.000 |
| 14 | այգեպան | 35.000 | 32.500 |
| 15 | էլեկտրիկ | --- | 32.500 |
| 16 | պահակ | 35.000 | --- |